

Ի Վ Ա Ն Թ Ո Ւ Կ Ե Ն Ե Վ

Յ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ը

(Եսր.)

Զ.

Մուծծիօի վերադառնալուց մի քանի շարաթ առաջ, Ֆարփօն սկսել էր նըղարել իր կնոջը: Նկարում էր նրան, Սրբուհի Զեշիլայի երեւոյթին տակ: Նա իր արուեստին մէջ կարեւոր առաջդիմութիւն էր արել. հոչակաւոր լուիսին, Լէռնարդօ դա Վինչիի աշակերտներից, Ֆէրրարայից գալիս էր իր մօտ և օդնում էր նրան իր սեփական խորհրդներով, և տալիս էր նրան իր մեծ վարպետի պատւէքները: Նկարը գրեթէ ամրողապէս վերջացել էր, մնացել էր միայն՝ աւելացնել մի քանի գծեր գէմքին վրայ. և Ֆարփօն մէծապէս կարող էր հարաբանալ իր ստեղծագործութիւնով:

Մուծծիօին դէպի ի Ֆէրրարա ձանապարհութիւր տեսնելուց յետոյ, նա դարձաւ իր արուեստանոցը, ուրտեղ Վալերիան սպորտաբար նրան սպասում էր. բայց այնաեղ չգտան նրան. կանչեց նրա, նա չպատասխանեց: Ֆարփօն նըւածուեց մի զալոնի անհանգստութիւնից, սկսեց որոնել նրան: Նա տանը ոչ մի տեղում չէր: Ֆարփօն վաղեց դէպի պարտէցը, և այնուղիւնը այնուղիւնը, ամենից մե-

կուսացած ձեմավայրերից մէկում իր ուշադրութիւնը գրաւեց Վալերիայի տեսքը:

Նա նստել էր մի նստարանի վրայ, գլուխը խոնարհել էր կրծքին, և ձեռները ծալլել էր ծնկերի վրայ. այն ինչ, իր հանոււմ, մի նոճիի մութ կանանչից գտղագողի դուրս էր նայում մի մարմարեայ այծամարդ, որ իր գէմքի վրայ մի չարամիտ ծամածուռ ժպիտով, ծըռած շրթունքները գրել էր Պանի սրինգին վրայ: Վալերիան, յայտնապէս, ամոքուեց իր ամուսնուն երեւումով, և այս վերջինին մատանչ հարցումներին պատասխանեց, որ մի թեթեւ գլխացաւոնի, բայց թէ դա մի անկարեւոր բան էր և թէ պատրաստ էր նրա համար իրը մողել ծառայել:

Ֆարփօն առաջնորդեց նրան իր արուեստանոցը, գիրք տուեց նրան, ու ձեռք տուաւ իր վրձինը, բայց շատ նեղացաւ նկատելով որ չէր կարող լլացնել գէմքը, որպէս ինք ցանկանում էր: Եւ այդ ոչ թէ նրա համար, որ նա մի աեսակ գունաւ և ուժասպառ էր երեւումունք, այլ նրա համար, որ այն անմեղ, որբանման արտայալութիւնը, որ ինք

այնքա՞ն սիրում էր նրա մէջ, եւ որը իւրեն տուել էր զաղափարը նկարելու վարդիային, որպէս Սրբուհի Զեչիլիա, նա այդ օրը տյդ բանը նրա մէջ չէր գտնում:

Նա վերջապէս նետեց վար իր վրբածինը, եւ ասաց իր կնոջ թէ ինք աշխատելու արամագբութեան մէջ չէ, եւ թէ նրան չի ուզում արգիլել հանգստանալու, որովհետեւ նա բնաւ լաւ չէր երեւում. եւ գրաւ կտաւը վար, երեսը պատին դարձրած:

Վալերիան համաձայնուեց նրա հետ, որ ինք պէտք է որ հանգստանայ, եւ կրկնելով իր գանգատը գլխացաւի մասին, քաշուեց դէպ ի իր ննջասենեալը:

Թարիոն մնաց արուեստանոցում: Նա ունէր մի տարօրինակ շփոթ տպաւորութիւն որ իրան անհասկանալի էր մնում: Մուծծիոյի ներկայութիւնը իր տան մէջ, որ ինքն իսկ ստիպողաբար հրաւիրել էր, այժմ իրան նեղացուցիչ էր թւում:

Եւ ոչ թէ նրա համար, որ նա նախանձում էր, — « եւ է մէկը կարո՞ղ էր նախանձ զգալ Վալերիայի համար — այլ նա իր նախկին ընկերը այլ եւս չէր ճանաչում: Բոլոր այն տարօրինակ, անծանօթ բաները, որ Մուծծիոն բերել էր իր հետ հեռաւոր երկիրներից, — եւ որոնք ըստ երեւոյթին, ներմուծւել էին նրա մարմնոյն եւ արեան մէջ — բոլոր այդ մոգական բաները, երգերը, օտարութիւն խմէչքները, համբ Մալայեցին, նոյն իսկ համեմաւոր բուրումները որ արտահոսում էին Մուծծիոյի հակուստներից, մազերից, շընչից, — այդ բոլորը, ֆարիօին ներշնչեցին կառկածութեան, նոյն իսկ թերեւս վեհերուտութեան մերձաւոր մի զգացողութիւն:

Եւ ինչո՞ւ համար այդ Մալայեցին, սեղանին սպասաւորած միջոցին այնպիսի անախորժ դիտաւորեալ նայուածքով աչքերը իր վրայ յառում էր: Խսկապէս, ո եւ է մէկը, կարող էր ենթագրել, որ նա հասկանում էր իտալերէն:

Մուծծիոն ասել էր նրա համար, որ կորցնելով իր լեզուն, այս Մալայեցին, մի մեծ զոհողութիւն էր արել, եւ ի վարձարութիւն, այժմ տիրապետում էր մի մեծ ոյժի:

«Ի՞նչ տեսակ ոյժի», եւ ի՞նչպէս նակարող էր այդ ուժը ստացած լինել՝ իր լեզուի գնով:»

Այս բոլորը շատ տարօրինակ եւ անըմբոնելի էին:

Թարիոն գնաց իր կնոջ սենեակը, նա հակուած պառկել էր մահճակալի վրայ բայց քնած չէր: Լսելով իր ոտնաձայնը, նա ցնցուեց, ապա նորից այնպէս թուեց որ ուրախացաւ նրան տեսնելով՝ ինչպէս պարապում: Թարիոն նստեց մահճակալի մօտ, րոնեց Վալերիայի ձեռքը, եւ մի կարճ լուսութիւնից յետոյ, հարցըց նրան. «Ի՞նչ էր այն արտաքոյ կարգի երազը, որ այնքան ահարեկել էր նրան, նախընթաց գիշերը: Եւ միթէ՞ ամէն կերպով նման էր այն երազին որ Մուծծիոն նկարագրել էր:» Վալերիան շառագունուեց ու հազարեպով ասաց. — «Օ, ոչ, ոչ, ես տեսայ... մի տեսակ հրէշ, զազան, որ աշխատում էր ինձ պատառ պատառ անել:» — «Մի հրէշ, մարդո՞ւ կերպարանքով», հարցըց ֆարիօն: — «Ոչ, մի զազան... մի զազան:» Վալերիան զարձաւ մէկ կողմ եւ թագցըրեց իր այրուող երեսը բարձերի մէջ:

Թարիոն իր կնոջ ձեռքը մի քիչ աելի երկար պահեց իր ձեռքի մէջ, յետոյ բարձրացըրեց իր շրթներին, ու

մեկնեց: Երկու երիտասարդ ամուսինները այդ օրն անցրին ճնշուած սըրտառվ: Մի ինչ որ մութ բան, երեւում էր որ կախուած էր նրանց գլխի վերեւ . . . բայց ի՞նչ էր այդ, նրանք չէին կարողանում ասել: Նրանք ցանկանում էին լինել միտուին, որպէս թէ մի վատնդ էր սպառնում նրանց. բայց ինչ ասէին միմեանց, չէին իմանում:

Ֆարիօն ջանք արեց նկարի մասին խօսել, եւ կարդալ Արիոսոփից, որի քերթուածը զեռ նոր էր լոյս տեսել, եւ որ այժմ մեծ աղմուկ էր բարձրացնում ամբողջ Խոալիայում, բայց ի զուր, ոչինչ չէր օգնում: Երեկոյին, ուշ ժամանակ, ճիշդ ընթրիքի պահուն Մուծծիօն դարձաւ:

Ե.

Մուծծիօն երեւում էր հանդարս եւ զուարթապին, բայց նրանց շատ քիչ բան ասաց: Նա աւելի հակում ցոյց արւեց հարցումներ անելու ֆարիօն, իրանց հասարակաց ծանօթութեանց, գերմանական պատերազմի, եւ Շարլ կայսեր մասին: Նա խօսեց իր սեփական ցանկութեան մասին, այցելել հռոմ եւ տեսնել նոր Պապին: Նա նորից Վալէրիային առաջարկեց մի քիչ Շիրազի դինից, եւ երբ նա մերժեց, իր մաքում նկատեց, «Կարիք չկայ այժմ, այդքան վստահ լինելու»: Դառնալով ետ իր կը նոջ հետ դէպի ի իրենց սենեակը, ֆարիօն իսկոյն քնեց եւ զարթնելով մի ժամ յետոյ, համոզուած զգաց իրան թէ ոչ ոք չէր բաժանում իր անկողինը: Վալէրիան իր կողքին չէր: Նա շոտակով վեր կեցաւ, եւ հէնց այդ վայրիկեանում, տեսաւ իր կնոջը՝ իր գիշերային տարազով, որ զալիս էր պարտէզից դէպի իրանց սենեակը: Լուսինը պայծառորէն վայլում էր, թէեւ զրանից քիչ առաջ,

մի թեթեւ անձրեւ տեղացել էր: Փակուած աչքերով, մի խորհրդաւոր սարսափի արտայայտութիւն իր անշարժ դէմքի վրայ, Վալէրիան մօտեցաւ անկողնուն, եւ ձեռքերը տարածելով շօշափեց նրան, եւ ապա շտապով անրարբառ մտաւ անկողին: Ֆարիօն դարձաւ դէպի ի նրան մի հարցումով, բայց նա չպատասխանեց, նա երեւում էր թէ քնած էր: Դպչելով նրան զգաց նրա հագուստներից ու մազիրից անձրեւի կաթիլները, եւ նրա մերկ ոտքերի զարշապարում փոքրիկ աւազի հատիկները: Ապա, նա վեր ցատկելով վաղեց դէպի ի պարտէզը. կիսարաց դրան միջից լուսնի վառ պայծառութիւնը բոլոր առարկաները լոյսով պարուրել էր: Ֆարիօն նայեց շուրջը, եւ նշմարեց որ աւազի վրայ գտնուում էին գրոշմներ երկու զոյդ ոտքերի, մէկ զոյդը բոպիկ, եւ այս զրոշմները առաջնորդում էին դէպի ի յասմիկների մի հովանավայր, տաղաւարի եւ տան միջեւ գտնուած մի անկիւնում: Նա մհաց անշարժ վարանութեան մէջ, եւ յանկարծակի, նա միանգամ եւս լսեց երդի հնչիւնները, այն նուազի որ նա լսել էր նախընթաց գիշերը: Ֆարիօն սարսաց եւ վազեց դէպի ի ասղաւարը . . . Մուծծիօն, կանգնած սենեակի մէջտեղում, նուազում էր ջութակի վրայ:

Ֆարիօն նրա վրայ խոյացաւ. «Դու պարտէզումն ես եղել, քո շորերը անձրեւից թաց են»:

«Ոչ . . . ես չեմ իմանում . . . ես կարծում եմ . . . ես զուրս երած չեմ . . .» Մուծծիօն պատասխանեց մեղմօրէն, ապշած երեւալով ֆարիօնի մուտքից եւ նրա գրգռուած վիճակից:

Ֆարիօն բռնեց նրա ձեռքը. «Եւ ինչու նարից նուազում ես մեղեղին . . . Արդեօք նորից մի երազ ես տե-

սել»։ Մուծծիօն մի ակնարկ նետեց Ֆարիօին, միեւնոյն ապշութեան նայուածքով և ոչինչ չասաց։

«Պատասխանիր ինձ»։

«Լուսինը կանգնած է բարձր, բոլորածեւ վահանի նման».

Օձի նման գետն է չողջողում . . .

Բարեկամը արթուն՝ թշնամին քընած։

Թուչունը բազէի ճանկերումն է . . . օգնութիւն».

Մրժնչեց Մուծծիօն, ինքն իրան մրժուալով, որպէս թէ զառանցանքի մէջ եղած լինէր։

Ֆարիօն երկու քայլ դէպ ի ետ քաշուեց, նայեց Մուծծիօին, կշռադատեց մի բազէ, եւ վերադառնալով տուն, գընաց իր ննջասենեակը։

Վալէրիան, գլուխը ուսին վրայ փլած եւ ձեռները անկենդան վար կախուած, խոր քնի մէջ էր։

Ֆարիօն չէր կարող իսկոյն զարթեցնել նրան, . . . բայց Վալէրիան անմիջապէս տեսաւ նրան, ինքն իրան նետեց նրա վզով ու ջղաձգօրէն համրուրեց նրան։ Նա դողում էր ամբողջ մարմնով։ «Ի՞նչ է պատահել, իմ անզինս, ի՞նչ կայ, շարունակում էր կրկնել Ֆարիօն, աշխատելով հանգստացնել նրան։ Բայց նա ատկաւին անկենդան փոռել էր իր կրծքի վրայ։ «Օ, ի՞նչ սոսկալի երադներ ես տեսայ, փսփսաց Վալէրիան, թագցնելով իր դէմքը նրանից։ Ֆարիօն ուզում էր հարցաքննել նրան . . . բայց նա դողդողում էր միայն։ Պատուհանի ապակիները առաւտեան լոյսից շառագնում էին, երբ վերջապէս ընկաւ քնի մէջ իր բազուկներում։

Է.

Յաջորդ օրը Մուծծիօն առաւօտ կանուխ անհետացաւ, այն ինչ վա-

լէրիան աեղեկացուց իր ամուսնուն թէ ինք նպատակ ունի զնալու մերձակայ մի վանք, ուրտեղ ապրում էր իր հոգեւոր հայրը, մի ծերունի խստաբարոյ վանական, որի վրայ նա անսահման վստահութիւն ունէր։ Ֆարիօի հարցամորձին նա պատասխանեց թէ ինք ցանկանում է խոսափանութեամբ մխիթարել եւ զօրացնել իր հոգին, որ ձնչուել էր վերջին մի քանի օրուայ արտակարդ տպաւորութիւնների ներքոյ։

Մինչդեռ նա նայում էր Վալէրիանի ընկճուած դէմքին ու լսում նրա նըւաղած ձայնը, Ֆարիօն հաւանութիւն տուեց նրա ծրագրին։ Արժոնաւոր հայր Լորէնցօն զուցէ տայ նրան թանկագին խորհուրդներ, եւ զուցէ փարատէ նրա տարակոյսները . . .

Չորս սպասաւորների ուղեկցութեամբ, Վալէրիան ճանապարհուեց դէպ ի վանքը, այն ինչ Ֆարիօն մնաց տանը, եւ թափառում էր պարտէզի մէջ մինչեւ իր կոոչ վերադարձը, ջանալով բարոննել թէ ի՞նչ էր պատահել նրան, ինչո՞ւ էր զոհ դարձած մի մշտական երկիւղի եւ սրտմառութեան, եւ անորոշ կասկածների ցաւին։ Մի քանի անգամ դնաց դէպ ի տաղաւարը, բայց Մուծծիօն չէր վերադարձել, իսկ Մալայեցին աշքը բառած՝ նայում էր Ֆարիօին մի արձանի նման, սարկօրէն զլուխը խոնարհեցնելով, իր պղնձադոյն դէմքին վրայ մի ժպիտով որ, ինչպէս թւում էր Ֆարիօին, լաւ քօղարկուած էր։

Միեւնոյն ժամանակ, Վալէրիան, խոսափանանքին մէջ ամէն ինչ ասել էր իր քահանային, ոչ այնքան ամօթով որքան սարսափով։ Քահանան լրսեց նրան ուշադրութեամբ, տուաւ նըւրան իր օրհնութիւնը, արձակեց նրան իր ակամայ մեղքից, բայց ինքն իրան մտածեց՝ «Կախարդանք, սասանայի

արուեստ . . . խնդիրը այսպէս չի կարելի թողնել . . .» Եւ Վալէրիայի հետ վերադարձաւ նրա ամարանոցը, թերեւս այն նպատակով, որ կատարելապէս խաղաղեցնէր ու ապահովացնէր նրան: Ի տես քահանային, ֆարիօն նետուեց մի տեսակ յուզմունքի մէջ, բայց փորձառու ծերունին կանխամտածել էր թէ ինչպէս պէտք էր վարուէր նրա հետ: Երբոր նա թողուեց մենակ ֆարիօի հետ, ի հարկէ շմատնեց խոստովանութեան գաղտնիքը, բայց խորհուրդ տուեց նրան, որ եթէ կարելի է աղատուեն հիւրից, որ իրանք հրաւիրել են իրանց տանը, որովհետեւ նրա պատմութիւնները, նրա երգերը, եւ նրա ամրող ընթացքը վրդովում են Վալէրիայի երեւակայութիւնը: Բաց ի դրանից, ծերունիի կարծիքով, Մուծծիօն, որքան յիշում էր, նախկին օրերից ըսկած, հաւատքի մէջ այնքան հաստատ չէ եղել, եւ իր կեանքի այնքան երկար մէկ ժամը սպառած լինելով քրիստոնէութեան ճշմարտութիւններից չլուսաւորուած երկիրների մէջ, նա զուցէ իր հետ բերած լինի վարակումը թիւր վարդապետութիւնների, նա նոյն իսկ գուցէ ընտանի դարձած լինի զաղանի մոգական արուեստների: Ուստի եւ թէ-

պէտ բազմամեայ բարեկամութիւնը ունէր իրօք իր իրաւունքները, սակայն մի իմաստուն խոհեմութիւն մատնացոյց էր անում բաժանման անհրաժեշտութիւնը:

Ֆարիօն կատարելապէս համաձայնուեց կղերականին հետ: Վալէրիան նոյն իսկ ուրախացաւ, երբ իր ամուսինը տեղեկացրեց նրան քահանայի տըւած խորհուրդը. Եւ երիտասարդ ամուլիս բարգին բարեմազթութիւններով ճանապարհ դրուելով, վանատան եւ աղքատների համար ընծաներով բեռնաւորուած, Հայր Լորէնցօն վերադարձաւ տուն: Ֆարիօն նպատակ ունէր ընթրիքից անմիջապէս յետոյ Մուծծիօնին բացարութիւն տալ, բայց նրա տարօրինակ հիւրը չվերադարձաւ ընթրիքին: Ապա, ֆարիօն որոշեց յետաձգել իր խօսակցութիւնը Մուծծիօի հետ մինչեւ յաջորդ օրը, եւ այր ու կին քաշուցան իրենց սենեակը հանգստանալու:

Թարգմ. Պ. Շեքերջեան

(Վերջը յաջորդ թիւով)